

թէ ըրիստոնէական դարերու ետև և հետանուական հնութեան խորը ծածկուած մէկը կայ, որ պիտի ենէ և արդարացնէ անոր ըսածը, կամ այլոց ըսածը. ոչ իւսակայն ահա յանկարծ Արքիուր կանոնած գտաւ իր առջև, կարծէց Տնից ծօրս անուանակոչութեամբ՝ խարզանելու և խարանելու արքիական քննադատու: Այսպէս եղած էին երբեմն Լարուրնայի նախհայ թարգմանութեան և ապա ասորի ըշնազրի երջանիկ զիւտերն, այսպէս հաւաքած ունինց Խորենացւոյ պատմագրութեան մէջ իստիւ քննադատուած կէտերուն վերաբերեալ ուրիշ աղրիւներ և պապանեցուցիչ փաստեր ևս, զորոնք կարելի էր յարել հոս, իրը շուրջ անոր ըրած յաղթանակին, սակայն կը ՛թողունց յարմարագրոյն առիթին: Միայն խորհուրդ կուտանք տեսուն գրողին, որ իր ամոյշեան Մովսիսին հետ արհամարհանօց չափուելուն տեղ՝ ուշի ուշով որոնայ իր նոր և նախորդ գրանները – ներշնչուած Աշխարհագրութեան եկամուտ յաւելուածներէն – և այն ատեն պիտի ներանդրազանայ արդարի՝ որ Խորենացւոյ պատմագրութենէն աւելի իր կրկնի գրուածոց մէջ կան քննադատելի և սրբագրելի բաներ, և թէ աւելի պատուաբեր է և մանաւանդ թէ պարտը իսկ՝ սրբագրել զանոնց, քան թէ թողուլ, որ զառնան զիստութեան անհարազատ և անմարսելի ժառանգութիւններ:

Հ. Բ. ՍԱՐԳԻՒՍԵԱՆ

ՀԱՅԵՐԵՆ ՆՈՐ ԲԱՌԵՐ

ԿԻՐԱԿՈՍ ԳԱՆՉԱԿԵՑԻՈՑՆ Մէջ

(Տպ. Վճռաբէ 1865)

1. Ալանի

Ոռաւել ջան տարցին եպիսկոպոսց և Քորեպիսկոպոսց՝ զպոռնիկս, զշնացողս և զնմայս և զամենայն յանցաւորսն՝ երկիւ-

դիւ գեհենին ի դարձ ածել... մանաւանդ զայնպիսին որ այր և կնոջ մէջ մոցին կամ բող ունիցին կին... և թէ պատուաւոր է մարզն և ընդդէմ ասէ եկեղեցւոյն օրինաց լըրութեամբ, թագաւորն իրաւացէ զարակի մեղքն (էջ 171):

Այս անծանօթ բառը, զոր չունին Հայկ. և Առծ. բառարանները, հրատարակիչը կը մեկնէ «յայտնի» չկը «ալան» «հրապարակային» բառն է. արակի մեղք այն յանցանցներն են, որ յայտնապէս, ամէնուն առջև գործուած են:

2. Գեր

Յօսար աշխարհէ եպիսկոպոս վարդապետ կամ երեց, կամ գերոյ տէր, առանց թեմի եպիսկոպոսի մի՛ շրջնացն կամ շինեսցն, այլ նորա հրամանաւ՝ ըստ պատշաճի (էջ 170):

Այս անծանօթ բառը չունին բառարանները. հրատարակիչն ալ մեկնութիւն մը չի տար. Կ'երեայ որ եկեղեցական պաշտօնեայ մ'է գերոյ տէր. թերևս բորեպիսկոպոն, բայց զեր բառին բուն նշանակութիւնը և ծագումը անստոյդ է:

3. Թաղար

Այլ և միւս ընդ այլ բազումս նոր եղան (հարկ) յիմրունէն՝ մալի և խափչուրի. եղան հրաման ի Հալաւուէն պահանջման հարկի, զոր բաղարն ասեն (էջ 218):

Հրատարակիչը կը յիշեցնէ որ բաղարբառը շատ անգամ իբրև «Հարկ» գործածուած է Անիի և ուրիշ տեղերու պրածանգրութեանց մէջ. կան նաև կիլ բաղար, կալի բաղար ձևերը:

Մանօթ բաղար «խեցելէն աման» բառն է, որ պարսկերէնէ անցած է թաթարերէնի և ասկէ ալ հայերէնի: Տեղ տեղ բաղար արդէն կը նշանակէ տեսակ մը չափ. ինչպէս վրաց. բաղարի կամ տաղարի, «չոր նիւթերու չափ մը», Շուլավէրի հայոց գաւառականով բաղար «չափ մը»:

թաղարը նախապէս կը ցուցնէր առնուած հարկին չափը և յետոյ ընդհանրանալով՝ առած է ընդհանրապէս «հարկ» նշանակութիւնը, ինչպէս որ պարսկերէնի մէջ ալ կը նշանակէ նաև «ոռնիկ, թոշակ»:

4. Լելլուտ

Եւ յնկրոտք, որ երթային առ նա՝ ասէր, թէ խաղացէք առաջի իմ և պարեցէք. նորա առնէին զայս յօժարութեամբ, քանզի այս ազգ դիւաց ախորժեն զիսաղ և զպար (էջ 183):

Մոսկուայի տպագրութեան մէջ (էջ 193) տպուած է յիկրոդ, որ Վենեսակի հրատարակիչը չի յիշեր: Ասիկա կու տայ միայն յիկոտք ընթերցուածը և կը մեկնէ «թուին ոտնառեալը կամ պատազրոսք»: Բայց հեղինակը արդէն իր բացարութեան մէջ ցոյց կու տայ որ լեկուոտը պատազրոսէ, այլ տեսակ մը դիւահար է, «քանզի այս ազգ դիւաց ախորժեն զիսաղ և զպար»:

Այս հիւանդութիւնը ծանօթ է մինչեւ հիմայ Ղարաբաղի մէջ. ժողովուրդը կը կոչէ զայն հղուցավ, խղուցավ, որ կը ծագի իսաղարացաւ նախաձեւն և կը նշանակէ «տեսակ մը հիւանդութիւն, որուն ենթարկուողը գիշեր-ցորեկ պարել կ'ուզէ»: այս հիւանդութեամբ բռնուածներն ալ կը կոչուին հղուցավուտ, այսինքն խաղարշառուտ:

5. Խափչուր

Օրինակը տե՛ս վերը՝ թիւ Յ:

Մայ և բաղար բառերուն պէս՝ այս ալ տեսակ մը հարկ է:

Հրատարակիչը իբր տարբերակ կը յիշէ Մոսկուայի հրատարակութեան փախուրը ընթերցուածը, որ և կը մեկնէ «թուի անսանահարկ, որպէս և մալն. պատմէցը թաթարաց քունիուր կոչեն զնարիւրորդ անսանոց, այսինքն զմի ի հարիւրոցն առնուլ»:

6. Խզուզ

Խսկ եթէ որ և որ ի ձեռն հաստատութեան է յօժար առ ի քաղել, ամառան խզուզին հանդիպիլ սիրելի է և թէ հասկի (էջ 193):

Կենդանի է մինչեւ այսօր գաւառական ներուն մէջ՝ խզուզ ձեռվ և կը նշանակէ «կալին մացորդը», ցորենի աւելորդ մազուք, յարդի կառուներ, կճեպի մէջ մնացած ցորեններ են, որոնք կալը քամելու և մաղելու ժամանակ երևան կու զան և որոնք առանձին տեղ մը հաւաքելով, երկրորդ անգամ կը կալսէն»: Այսպէս ունին Խարբերդ, Մուշ, Վան, Ապարան, Բուլանըխ, Բասեն և Շիրակ:

7. Խէլ

Էին յարեւս երկու եղբարց, որդիք Սարգսի բարեպաշտ իշխանի, որդուոյ վահրամայ, որդուոյ Զաքարիայ, որ հատուածեալ ի Քրդաց, ի բարիրական խելին (էջ 78):

Կը թուի թէ կը նշանակէ «կողմ», ինչպէս կը նկատէ նաև հրատարակիչը. «Բարիրական կողմանս ասիցէ թէ այլ ինչ, կամ թէ սիսալ, ո՛չ գիտեմ»:

8. Ծնծառ

Ցամենայն զլիոյ որ մտեալ էր ի գիրն արցոնի, պահանջէին հարիւր լիտր ցորենան, յիսուն լիտր զինի, երկու լիտր բրինձ և ծնծառ (,) երեք տոպրակ, երկու չուան... (էջ 219):

Նեճառ բառին համար հրատարակիչը կը գրէ. «Թուի հասկախառն կամ յարդախան զարի կամ այլ ընդեղէն»: Կ'երևայ որ կը մտածէ կապել գաւառական ծանծ «կալի մացորդ, խզուզ» բառին հետ. բայց չեմ կարծեր թէ թաթարները կիսակալուած բաներ ընդունէին իրեւ հարկ: Բրինձ բառն յարադրութիւնը կը ցուցնէ որ ծեծառ պէտք է հասկնալ «զալթուկ, գեռ փեճեկէն չհանած բրինձ»:

9. Հալած

Նինէր վանորայս և աղքատանցոց շինքը, և ժողովէր զուրուկս և գչալածու, և կարգէր դարմանս և ոռճիկս նոցա (Էջ 12):

Պէտք է հասկնալ «հիւանդ» կազմուած հայիր «վատիլ, ծիւրիլ» բայէն, բայց կարելի է նաև կարդալ հաւած «հիւանդ»։ հմտա կիրք Հաւատոյ, էջ 286 հաշամք «հիւանդութիւն»։

10. Հեղձամուղձ

Եւ վէրք ի փող նորա յանկարծակի, և հեղձամուղձ սատակեցաւ չարն չարաւ (Էջ 176):

Հեղձամուղձ «խեղդուելով, հեղձամահ»։

11. Ճանդար

Քանզի յանկարծ պատառեալ երկրի, արտաքս ելեալ ջուր սեւաւ. և ծառ սօսի՝ զոր ձանցար կոչէին՝ մերձ յոյժ առ քաղցին մեծ, տեսին զնա յանկարծակի Մըրջեալ իւրովի (Էջ 124):

Նէր և ԱԲ չփառեն այս բառը։ Այիշանի Հայրուսակիլն մէջ (§ 1848) կը գտննէն ձանցարի «սօսի ծառն է պրուեզուած, յիշուած է ի Մ'եկն, ծննդոց զրոց (Եղիշէիք?)»։

Գանձակեցոյն խօսքերը՝ որոնք Գանձակի պարսիկներուն համար են, կասկած չեն թողուր բարին նշանակութեան, ինչպէս նաև պարսկերէն ըլլալուն վրայ։

Մ'եր նոր գաւառականներուն մէջ ունինք ձանցարի (Ծփղիս) «բարտի ծառ», ձանցար (Մուշ) «գերան»։ Ձանցարի իրք «սօսի» կը յիշուի Հովհիւ 1906, 430։

12. Ցիշոցաւագ

Նախ քան զամենայն և յառաջ քան զամենքդ, զայս եմք հոգացեալ առաջի արքային Հեթմոյ և հօր իւրոյ կոստանդեայ և ամենայն իշխանոց (իմա՞ իշխա-

նաց), և բանադրանօք բանադրեալ՝ որ յամենայն տեղի մեծ և փոքր՝ յիշոցաւագ զնեն, ի զարպաս, ի գիւղ, ի բաղաց, ի բերդ, զիստուծոյ բարկութիւն շարժողան և զաններելի անօրէնս՝ որ անարգեն գհաւատու, զստեղծողս, զկնունք, հրեշտակը, բահնայի, բերան, երես, գերեզման, և այլ այսպիսի, զնոր բուսեալ չարիատ, զայնապիսեցն զլեզուն հատցեն և կամ ծառ կեսցն և լար ի ներս ածցեն... (Էջ 171):

Շատ հետաքրքրական պատմական տեղեկութիւն մ'է այս հայկոյելու տովորութեան ծագման մասին, որուն համար կ'ըսէ թէ նոր բուսած չարիք մ'է։ Անշոշտ թուրքերու բերած չարիբներէն մէկն է այս, որ հին հայոց մէջ զոնէ այդշափ տարածուած չէր։

Յիշոցաւագ կը կոչուէին այն զատաւորները՝ որոնք պաշտօն ունին զատելու և պատմելու յիշոցաւուները, վերոյիշեալ ձևով լեզուն կտրելով, կամ ծակելով և մէջէն թել անցունելով, կամ տուգաննելով և կամ ծեծելով ու փողոցները պտտցնելով։

13. Պաղստո

Խսկ նա իրրե եկաց ի թագաւորութեան ամս չորս, խարեաց զնա հայրն և առ ի նմանէ զթագն Լևոնի արքային, և զպազան արքունական, զոր յիշելի աւուրս կանգնէին, և այլ զանձս ոսկոյ և արծաթոյ (Էջ 94):

Հրատարակիչը կը մելնէ «թուի վրան կամ զահաւորակ»։ բայց որովհետեւ «զոր յիշելի աւուրս կանգնէին» կ'ըսուի, ուստի պէտք է հասկնալ միայն «վրան»։

Վարդան պատմիչն ալ (տպ. Վենետիկի, էջ 141) նոյն դէպքի առթիւ խօսելով՝ կը գործածէ նոյն բառը, բայց շատ անորոշ ձևով։ «գագատարական թագն և զպազան առաքէր ի տուն հօր իւրոյ»։ Հրատարակիչը կիրակոսի վկայութիւնը աչքի առաջն չունենալով՝ այս բառը մեկնած է «իմա զպաս և զգանձս արքունի պալատանն»։ բայց թէ այս մեկնութիւնը սանոյգ չէ, կը ցնուցնեն կիրակոսի բառերը։

Պարատ «վրան» նոր բառ մը չէ, այլ մեր ծանօթ պարատ «ապարանք» բառին մէկ նոր առումը, որ կը գտնենք նաև ոռուսերէնի մէջ, ուր կայ պալտեա «վրան», ձեացած ոռու, ուլատա (= լու, palatiū) «պալատ» բառէն:

14. Ջինանգիր

Եւ նա (Խալիֆայն Պաղտատու) խըստութեամբ ետ պատասխանի և անարգանօք, գրեալ զանձն յիշանցիր, և տէր ծովու և ցամացի, պարծելով ի դրօշն Մահմէտի (Էջ 222):

= պրա. անկայություն jihângîr «աշխարհակալ»:

Այսպէս կը մեկնէ նաև հրատարակիչը:

15. Սաղաւած

Զմի որդի խալիֆայն հրամայեաց որդույ իւրում սպանանել, և զմիւ որդին տալ գետոյն Տիգրիսի սաղաւած (Էջ 223):

= արար. սալավ salavat «նուէր», ինչպէս կը մեկնէ նաև հրատարակիչը: Նկատելի է լի տեղ դ տառադարձութիւնը կիրակոսի դարուն:

16. Փարագիւղ

Ամենեցեան ի վախիցն ի վայր միսեալը՝ ի ձորն անդր լնուին, ի գլուխս քարագիւղն Գառնոյ (Էջ 118):

Քարագիւղ կը նշանակէ «գերբուկներու ապառաժներու մէջ շինուած զիւղ»:

Այս բառին տեղ Միիս. ասորիին մէջ կը գտնենք քարախրամ. «Գառնի, որ շինեալ է ի վերայ բարձր քարախրամի» (Էջ 528):

ՎԱՐԴԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷջ

ԾԱՆՈՅ. — Կը գործածեմ վենեստիկի 1862 թուի հրատարակութիւնը, որուն հետ սակայն ամէն անզամ հասեմատութեան առած եմ Մոսկուայի (Էմինեան) հրատարակութիւնը: Վենետիկի ապագրութեան-

հրատարակիչը (որ Հ. Ալիշանն է) մեր հոս յիշած բառերէն մաս մը արդէն ծանօթազրած ու մեկնած է, որով իմ գործս կրկնութիւն մը պիտի ըլլայ, բայց կրկնութիւն մը՝ նոր տեղեկութիւններով ճոխացած և ուղղուած: Այսպիսիները աստղանիշով մը նշանակած եմ:

1. Ալամ

Ել համբաւ զնմանէ ուժգին, մինչև խալիֆայն երկուցեալ՝ առաքէ նմա ընծայս և արամ (Էջ 94. — Էմ. Էջ 127):

Եւ նա մեծարէ զնա արամբը պատուականօց, և տայ նմա արամ և ընծայք (Էջ 96. — Էմ. Էջ 130):

Նոյն բառը կը գտնենք նաև Միխանորի, Էջ 419, «Եւ ի նոյն ամի առաքեն դարձեալ Մ'ելեք Խազեայ պարզն Խալիֆայն և Խիաթատինն չորս ալամ սեաւ, Էջ 529՝ ալամ վրացոյն հրով այրեցաւ, Էջ 605 թիսէ որդին Շեխայ ալամ ետ, այսինքն դրօշ»:

= արար. իւ ալամ «դրօշ, դրօշակ»:

2. Ալլամ

Խորհէին այրանքն ազգայինքն Զանկըզգանին՝ առ մեծն եկեալ (Էջ 156. — Էմ. Էջ 204՝ այլ դահին):

Ալլամն զնա ո՞նց տեսաւ... Ալլամ, այդ զրամդ հատանի և հանդերձդ մաշի (Էջ 158. — Էմ. Էջ 208):

Ինըն իսկ էրդանն կոչեցեալ Հուլաւուն (Էջ 149):

= թաթար. ալլամ ոյլ-խան «գաւառի կամ մասնաւոր երկրի մը թագաւոր, որ հապատակ է մեծ խանին, վասալ»: Կազմուած է լի «երկիր, ցեղ» և յև խան «իշխան» թագերէն: Կը հնչուի նաև ըլշան, այս պատճառով հայերէնի մէջ ալ ունինք այրդան և էրդան ձերը»:

Լովկասի թուրքերն ու բուրգերը մինչև այսօր ալ կը գործածեն էլ-բազի «ցեղա-

պետ»։ Պօլսոյ թուրքերէնով ալ կայ օլ-
bašə «խաղի մէջ ընտրուած խմբապետ»։

3. Անդալատ

Եղև նշան... ածեալ մանուկ մի կոյր
ի ծնէ և եղեալ ի վերայ աշացն տեղւոյ
զգէնն աստուածամուխ՝ նոյն ժամայն պա-
տառեալ տեղւոյն աշացն և հոսեալ ա-
րին բազում՝ կազմեցան աչքն անարաս
ամեննկին։

Այսպէս ունի Վենետիկի հրատարակու-
թիմեր, էջ 129. բայց լմինի հրատարա-
կութեան մէջ (էջ 169) կը գտնենք ահ-
դարատու։

Նոյն բառը կը գտնենք նաև Շնորհալ-
ւոյն տապակներուն մէջ. «Կաթողիկոսն էր
անդալատ»։

— արար. եւէ թալատ « թերութիւն,
սփալ, պակասութիւն» բարձն բացասա-
կան, իբր «անթիրի, առանց պակասու-
թեան»։

4. Ասալս

Զի ասախին, որպէս ասէին ինքեանը
կոչելով զեղեալ սահմանն ի Զանկըզդա-
նէն . . . հրամաէր պահել և պահէր (էջ
160. — Էմ. էջ 211):

— թբր. չամ یاسաց կամ տակ յա-
սազ «օրէնք. 2. արգիլել»։

5. Եպարքի

Զկապուտկիա, յորում մայրաքաղաքն
կեսարիա, երրորդ կոչէ Հայր, և առնէ
զնա եպարքի (էջ 59. — Էմ. էջ 83):

— յն. Շպարչիա « գաւառ, առանձին
կառավարուած նահանգ մը»։

6. Ելիթավ

Զոր խարէութեամբ կալեալ երիսրավի
Շաքէոյ, բերէ անդրէն առ արցայ (էջ 127. — Էմ. էջ 166):

— վրաց. երիսրավի «իշխան»։

7. Լուր

Մեր մեծ մարդ և աստիճանի տէր չենք,
լուր արեղայ մի եմք (էջ 158):

Մէշում քթեթ կարեմ խիստ գէշ և
խիստ փոքր իրք. լուր այնչափ որ խունկ
զնես եկեղեցւոյն (էջ 158):

Երկու պարագային ալ իմին ունի րոկ (էջ 208):

Ուրիշ օրինակներ կը գտնենք հետևեալ
տեղերը.

1. Շնորհ. առակը, 85.

Էր ի մեծաց խիստ ահազին,

Եւ ըզառւ բուրզ էր իւր ասուին,

Նա բոր կապէր զմաշկէ զօտին,

Բնաւ չեկեր զվաստակ եղին:

2. Ուռչայեցի, սպ. Վզրցապ. էջ 135.

Հոռոմը յայն ջանս ջանացան, որ լուր
զպարիսա ամրութեան տանս Հայոց բա-
կեալ կործանեցին։

3. Ուռհ. էջ 225. Եւ լուեալ զայս
ամենայն Փիլառոսոն՝ ոչինչ կարաց առ-
նել, լուր ի յուրոց հանեալ և դառնա-
պէս ապաշաւէր։

4. Ուռհ. էջ 234. Լուր այն եղին նմա
յօգուս, որ զմբրիստոս ուրացաւ և եղե
նախատինը և ատելի լիստուծոյ և մարդ-
կան։

5. Ուռհ. էջ 371. Ապա էառ ի նմանէ
զանձ և դիպակ, և լուր մտաւ ի բազաբն։

6. Ուռհ. էջ 421. Լուր զրինձն հա-
ւանեցայց և զիտրոսի խած երկիրն դար-
ձոյց, և զայն բաւական համարեցաւ իւր
յաղթութիւն։

7. Ուռհ. էջ 421. Լուր զպարոն լեռն
տարաւ և զայլ Հայերն։

Իմամկան ձև մ'է, որ կը նշանակէ
«լոկ, միայն, սոսկական, մինակ». ասկէ
է բոր օր «ոչ տօնական օր, հասարակ՝
րանի օր»։

8. Խածեւած

Եւ ապա գայ ի խալիֆայէն դեսպան
և արկանէ օգ ոսկի ի պարանոց նորա, և
երկոտասան վարոց ի մի կապեալ հար-

կանէ զնա խաճեար արարեալ, որպէս թէ այնչափ հնազանդ է իւրում առաջնորդին (Էջ 102. – Էմ. Էջ 136):

Նոյն պատմութիւնը ունի նաև Միխա-
յէլ ասորի, Էջ 419. « Եւ ի նոյն ամի՞
առաքեն գարձեալ Մելեք Խաղեայ պար-
գևս խալիփայն և խիաթատինն չորս ա-
լամ սեաւ և շղթայ մի պարանոցին և
զաւազան ոսկի և նազարայ և փողս: Եւ
յորժամ բերին զայս, գտին զնա մեռեալ,
և ետուն զպատիւն որդոյ նորա Մաշմու-
տին. և արկին շղթայն ի պարանոցն և
կապանս ոսկեղէնս յոտսն, և հարին զնա
զաւազանաւ երկուտասան անգամ, նշանա-
կեալ այնու զինազանդութիւնն»: Դժբախ-
տարար հոս խաճեար բատին համապա-
տասխան բացատրութիւնը չկայ. սակայն
պատմութեան ձեէն մօտաւրապէս կ'ե-
րեայ անոր նշանակութիւնը: Ալիշան կը
մեկնէ « թուի խաճեայքն արարեալ, ծա-
նակեալ կամ խաճիկը ըստ արարաց »:

« Մշանակեալ » իմաստը յարմար է, բայց
արուած ստուգարանութիւնները անյարմար
կը կարծեմ:

9. Հարամիլ

Մինչ տիրէին Ակիթացայիքն Երուսա-
ղեմի, և առնուին վարձու ի մտելոցն ի
սուրբ գերեզմանն, դիպեցաւ կուս մի
փուանգ ազգաւ ի իուանն հարամդի և զայ-
րանաւ, վասն այնը զանիլ (ծեծ ուտել):

Այս ձեռվ է Վարդանի այս հատուածը
վենեսակի հրատարակութեան մէջ (Էջ 110):
Էմինի հրատարակութեան մէջ (Էջ 146)
ինդրական բառին դէմ կը գտնենք հա-
մարդիլ: Ալիշան ձեռագրական տարբերու-
թիւններ չի տար. բայց պէտք է կարծել
որ Վենեսակի ձեռագիրներուն մէջ ալ կան
այս երկու տարբեր ընթերցուածները, Նշի
ունի համարդիլ « նեղիլ, դժուարիլ » բառը,
որուն տակ կը յիշէ միայն Վարդանի այս
վկայութիւնը և զգիտէ հարամդիլ: Խակ
Առ. Բառ. կը զնէ թէ՝ համարդիլ « նե-
ղիլ, դժուարիլ » և թէ հարամդիլ « հրուիլ,
զարնուիլ », առանց անդրադառնալու որ

երկուրը մի և նոյն բառին ձեռագրական
տարբեր ընթերցուածներն են և անոնցմէ
մէկը կամ միւսը պէտք է չնշել, նշանա-
կութիւններն ալ միացնելով:

10. Ճէմլայ

Եւ ի գալ միւս ամին, անկաւ հուր-
յերկնից ի ճէմլայն Ամթայ, որ է միերայն
հաւաքման մալիմանաց (Էջ 117. – Էմ.
Էջ 154 ի ճէմլայն):

= արար. Ճէմլու « մզկիթ », ո-
րուն բուն ստուգարանական իմաստն է « հա-
ւաքող (իգականը ևուշ յամի յամից) ». ասոր
համար է Վարդանի « միերայն հաւաքման
մալիմանաց » բացատրութիւնը:

11. Մուկրի, մուրի

Առնլով ի նոցանէ զվրէժ արեան ըրիս-
տոնէից, ըստ որում և զաղօթատուն նոցա-
լցիւալ արամբ՝ այրել հրամայէր, զո՞ն լի-
նել իշխանացն՝ որը ի նախջուանու եկե-
ղեցիսն, և կուռայքն և մուղրիքն սուրբ
բահանայիցն, որ ի թագուան զենեցան
(Էջ 140. – Էմ. Էջ 183):

Եւ զգագաթունսն թանեֆեացս առեալ
ի միերայն՝ զարդարէ ոսկեթել հանդեր-
ձիւր, և եղեալ ի դագաղս՝ բառնայ ի
յուսս մուկրեաց (Էջ 127. – Էմ. Էջ 166
մուղրեաց):

Գործածուած է նաև Յայսմաւուրքի մէջ
քանիցս անգամ մուղրի ձևով (Հմմտ. Նոր
Վկայը, Էջ 116, 225–227, 446):

Կը նշանակէ մահմետական կրօնաւո-
րական աստիճան մը:

= արար. Ճէմլու « խոստովա-
նող » ?

12. Շուտ

Բայց զշւոտ ամիսն անհնազանդեալ
(գերն կախարդաց) գործեն զկամս իւրեանց՝
տանելով զոմանս ի մարդկանէ (Էջ 19.-
– Էմ. Էջ 29 շուտո):

Շուտա կամ շուտա՝ փետրվար ամիսն
է, որ կօտ զայ պրս. Եթև կամ Եթև ՏԱ-
ՅԻՆ հոմանիշն: (Գէորգ զպիր այս բա-
ռին համար կը զրէ որ թէկ « հոչակեալ »

է գրիլ լատ, բայց պարսք թօ տառիւս
գրեն շնան »):

Ալրդի բարբառներուն մէջ շոտու կը գոր-
ծածուի սովորաբար «տեսակ մը ողի»
նշանակութեամբ (տես Ա. Վ. Ալյատովնի,
Հայ բառ ու բան, Էջ 523): Ասիկա նոյն
է Վարդանի յիշած գեերուն հետւ: Բայց
մեր բարբառներուն մէջ շոտու կը նշա-
նակէ նաև «փետրվար» ամիսը, այսպէս՝
շոտուի զիշեր (Միւլիհիսար) «Տեսան ընդ-
առաջի զիշերը, երբ այդ ոգիները կա-
տուներու փորը կը մտնեն», շոտու «փե-
տրվարի վերջին զիշերը» (Մուշ), «փե-
տրվար ամիսը» (Ակն. Աւաշկերտ):

13. Արանիմագ

Հինգհարիւր արս սրահնեցու բարձրա-
ցոյց ի փայտ մահու ի Տփիխս քաղաքի
(Էջ 119. - Էմ. Էջ 156՝ սրահնեցու):

Նէր ունի սրահնեց, որ կը մեկնէ՝
«չեղջակոյս սպանելոց», իբր դրահնեց
բառին մէկ տարբեր գրութիւնը. իբր ըւ-
կայութիւն կը բերէ՝ «արս հինգհարիւր
սրահնեցս ի փայտն հանեալ սատակէր»:

չարաչար»: Ուուշ. Էջ 350: Զգիտէ վար-
դանի յիշեալ վկայութիւնը:

Բայց ինչչէն հետեցուցած է Նէր որ
Ռւոհայեցոյն յիշեալ վկայութեան մէջ
սրահնեց կը նշանակէ «չեղջակոյս»: Կար-
ծեմ ասոր համար որ և է պատճառ չկայ:
Թէ՛ Ռւոհայեցոյն և թէ Վարդանի վերի
վկայութեան մէջ սրահնեց կրնայ միայն
նշանակէլ «սրիկայ», աւազակէ: Ալյատէս
մտածած է անշուշտ նաև Առա. Բառու,
ուը սրահնեց բառին դէմ չկայ «չեղջա-
կոյս» նշանակութիւնը, այլ «սրիկայ»:

14. Քրուալ

Եկն կովն բչելով և քրուալվ, և հեր-
ձեալ զամրոխն խնզրէր զորին (Էջ 66.
- Էմ. Էջ 92՝ քրուալվ):

Նէր և Առա. Բառ. չունին այս բառը,
Բայց Նէր ծանօթ էր անոր, որովհետեւ
բչել բառին տակ իբր վկայութիւն կը բերէ
Վարդանի ճիշտ այս խօսքը (քրուալ ըն-
թերցուածով): Ասկէ կը հետուի որ Նէրի
չյիշելը մոռացման արդիւնը է միայն:

Քրուալ կը նշանակէ «բառաչել»:

Հարուեակելի

ԱՐՈՒԵՍՏԻՆ ԸՄԲՈՆԻՍԸ

ՄԵՐ ՄԷՋ

Կաւը արուեստաւորին ձեռքին մէջ հին ատեն արարչական ուժ
մը ունէր, գերրնական մոզականութիւն մըն էր անոր բնածին ընդունա-
կութիւնը, արուեստաւորը գետափէն կ'առնէր կափ զանգուածը և ոսկրի
կոսորով մը ակնթարթի մէջ անոր կու տար այն զմայլելի ձեւ որուն
գեղեցկութիւնը երգուած է Տրոյիոյ պատերազմի գուսան Հոմերոսի
ընարով: Քրիստոսէ չորս դար առաջ թաղուած թանակրեան կաւէ
արձանները թարգման կ'ըլլան բնածին արուեստագէտ արձանագործ
տաղանդներու կարողութեանը. Ժէրոմ իր հզօր մուրմովը ցանդակեց
մարմացուց անոնց ընդօրինակութիւնը: Թանակրիայի գերեզմաններու